Դանիել Վարուժան

Անահիտ

Խոտին մեջ է թաղված բագինդ: Չեն ծրխար
Խունկերն անույշ, զոհն այնտեղ չի՛ արյունիր:
Կուգա լոկ բույր մը համպար
Խորխի՝ զոր հոն թողեր է օձ մը կարմիր:

Հոն կը նըստիմ, խո՛նջ ուղևոր: Ձիս կ'արծի,
Եվ Վահագնի զամբկին կարծես հոտն առած՝
Կըտղուցեն խոլ կը խաձի:
Բայց արևեն մեզ չի գար ոչ մեկ Աստված:

Անհետացան անդարձ խորեն անտառին
Քուրմերը լայն թեզանիքով: Չի՛ երգեր
Ծիծերըդ՝ վինը Վրույրին:
Բագինիդ շուրջ կը հեծկըլտան եղեգներ:

Չես հանգըրձեր պատմուճանդ ալ, ո՛չ մեկ վիթ
Նիզակահար՝ կը ներկե ծունկդ արյունով:
Թանգարանին մեջ անդրիիդ
Կը տաղտկանա, և չի՛ պսակվիր գարունով:

Բայց դուն կ'ապրիս, պիտի ապրիս հավիտյան,
Ո՛չ երկրիս վրա. երկինքի՛ն մեջ, Անահի՛տ:
Ահա կ'ծագի լուսնկան,

Եվ կը ծագիս դարձյալ՝ մահիկը ճակտիդ:

Քեզ կը տեսնեմ աստղերուն մոտ: Ծիծերեդ
Լույս կը հոսի աղբյուրին մեջ՝ ուրկե խմող
Եղնիկին դունչը նամեդ
Եվ եղջյուրները կ'օծվին ոսկեշող:

Վա՛ր կը նայիս. օրիորդները վարար
Կը զգաստանան. գինիին տաշտը կի'իյնա
Բագուսուհվույն ուսեն վար:
Կ'աղոթե կույսը ծընրադիր մահճին վրա:

Կապարճըդ ուսիդ, լարած աղեղըդ լայնշի՝
Կը վարես սայլը լուսնակին լրոելյայն…
Կյանքն անտառին կը շարժի.
Ձեռքիդ ջահեն վախցած՝ գայլերը կ'ոռնան:

Կ'երազե դաշտն. ու կոկոնները վարդին,
Փրքիններուդ խայթին ներքև, մի առ մի,
Բերանիդ պես կը բացվին:
Կ'եռա ավիշն այգիին մեջ վաղեմի:

Կ'հոսես ծիծերդ, կ'անցնիս կ'երթաս, բայց մարդիկ
Չե՛ն պաշտեր քեզ. տա՛րըր մը սոսկ կ'ընդունին:
Քանդած են հովն ու ալիք
Մեհյա՛նըդ իսկ քերսոնեսի ափունքին:

Միայն, գիշերն, որսական շունըդ լրքված
Կը տեսնե վերն անցքըդ, մահիկը ճակտիդ,
Ու բագինիդ վրա նըստած՝
Կը նայի քեզ և կու լա, ո՛ Անահիտ: